

ԹԻԻՐՔԻԱՅԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ *)

Փինանսների մինիստրութիւնը ներկայումս

Նախ և առաջ մենք կանգ կ'առնենք թուրք ֆինանսների այն մասի վրայ, որի մէջ Եւրոպան չի խառնուում և որը կախուած է անմիջապէս իրան, թուրք կառավարութիւնից, և որը «Մալիէ-Նազիրի» տնօրինութեան տակ է գտնուում:

«Մալիէ-Նազիրի» (ֆինանսների մինիստր) պաշտօնը մի երկրում, ուր չկան պարլամենտական վերատուգող մարմիններ, ուր ժողովուրդը, գուրկ որ և է իրաւունքից պարտաւորուած է ընդունել կառավարութեան ներկայացուցած բոլոր ծախքերը՝ առաջի անգամից կարող է երեսւ շատ հանգիստ ու ցանկալի՝ բարձր պաշտօնեայի տեսակէտից: Աւելացրէք դրա վրայ և այն, որ Թիւրքիայում բոլորովին պոյութիւն չունի հասարակական կարծիքը և պետական ելքի ու մուտքի նախահաշիւը մինչև իսկ չի հրատարակուում: Եւ սակայն հազիւ թէ Թիւրքիայում գտնուի մի այլ պաշտօն նոյնքան պատասխանատու, որքան և դժուար, ինչպիսին է ֆինանսների մինիստրի պաշտօնը:

Մալիէ Նազիրիի առաջին և գլխաւոր հոգաւ պէտք է լինի ժամանակին գտնել և հասցնել փողի որոշ գումար Իլդիզ-Քիօսկ, այսինքն սուլթանի և նրա շրջապատողների անձնական ծախքերի համար: Մնացեալը, ինչպէս օր. զօրքի, պետական պաշտօնեաների ուժիկը, առօրեայ ընթացիկ պետական ծախսերը և այլն, դրանք երկրորդական դեր են խաղում մինիստրի համար, յամենայն դէպս միւս բոլոր ծախքերը կարող են «սպասել»: Զէնքի կամ այլ պետական անհրաժեշտ մթերքների մատակարարողները քաջ գիտնալով որ պէտք է երկար «սպասեն», ապրանքները մատակարարում են աւելի թանգ գնով և որակի կողմից աւելի վատ. այդ մասին ամեն ոք գիտէ բայց ամենքը նայում են իբրև անհրաժեշտ չարիքի վրայ:

Այն փաստը, որ պետական թէ բարձր և թէ մանր պաշտօնականների իրաւունքները և պարտականութիւնները բոլորովին մութ և անորոշ են, մանաւանդ աչքի է ընկնում ֆինանսների մինիստրութեան վերաբերմամբ: Այդպէս 1890 թ. սուլթանը հաստատում է մի յատուկ ֆինանսական յանձնաժողով, որ կոչուեց, թոփխանէ (ժողովները թոփխանէ պալատումն էին տեղի ունենում), որի նպատակն էր մանրամասնօրէն ծանօթացնել իրան՝ սուլթանին ամեն տեսակ ֆինանսական ծրագիրների ու ու առաջարկութիւնների հետ: Այդ յանձնաժողովը բոլորովին անկախ էր ֆինանսների մինիստրից և շատ անգամ մինչև իսկ առանց նրան հարցնելու՝ խառնուում էր մինիստրի կարգադրութիւնների մէջ: Եւ որովհետև սուլթանի համար էր հաստատուած այդ յանձնաժողովը, ուստի և սա դարձաւ բոլոր ֆինանսական հարցերի համար ամենաբարձրագոյն ինստանցիան, թէև այդ հարցերի ամբողջ բարոյական պատասխանատուութիւնը մնում էր առաջուայ պէս ֆինանսների մինիստրի վրայ:

Թրքաց ֆինանսների մինիստրութեան մէջ ամբողջ օրերով զբաղուած են հարկեր մեծացնելու նորանոր ծրագիրներով (հայ, յոյն, հրէայ և եւրոպացի միջնորդների կողմից առաջարկուած): Հասկանալի է իհարկէ, որ այդ բոլոր առաջարկութիւնները ոչ մի կապ չունին երկրի տնտեսական բարենորոգման հետ: Թրքաց մինիստրների մեծամասնութեան համար մի որևէ նոր փոխառութիւն—միլենոյնն է թէ մի պետական եկամուտի մեծանալը:

Ֆինանսների մինիստրը չէ կարող որ և է եկամուտի նոր աղբիւր բանալ առանց պատահելու այն կամ այս եւրոպական տէրութեան շահերին:

Այդպէս՝ Թիւրքիայում շատ են սիրում ամեն ինչ մոնոպոլիայի ենթարկել. ուզում են օր. ծխախոտի թղթի մենաշնորհում—բայց Աւստրիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչները իսկոյն իրանց բողոքն են յայտնում, որովհետև այդ ապրանքը ներմուծում է գլխաւորապէս Ֆրանսիայից և Աւստրիայից: Կամ թէ խօսք կար, օր. կերոսինի մասին, բայց այստեղ արդէն Ռուսաստանը բողոքեց և հարցը փակուեց: Ինչպէս երևում է, ֆինանսների մինիստրի պաշտօնը անքան էլ հեշտ չէ...

Դալով ֆինանսական վարչութեան կազմակերպութեան, այս մասին պէտք է ասել հետևեալը: Կազմակերպութեան տեսակէտից և առած թղթի վրայ, նա իր մէջ կրում է առողջ սաղմեր: Այդպէս՝ Գ. Պոլիսը և գաւառները, ինչպէս և գաւառները միմեանց վերաբերմամբ բոլորովին անկախ են: Նրանք ունեն իրանց սեփական նախահաշիւը, իրանք պէտք է ծախ-

սեն եկամուտի որոշ մասը տեղական պետքերի վրայ, մնացած մասն էլ ուղարկելու են Ֆինանսների մինիստրութեանը: Այս բոլորը իհարկէ հիանալի կը լինէր, եթէ միայն իրագործուէր: Իրողութիւնը սակայն այլ բան է ասում: Հէնց որ կենդրոնական վարչութիւնը (Կ. Պոլսում) փողի պէտք է զգամ, իսկոյն իր անունից տալիս է չէկեր այս ինչ գաւառի վարչական զանձարանի վրայ, որը և պարտական է փող տալ այդ չէկերը ներկայացողներին: Պատահում է և այնպէս, որ միևնոյն գաւառական զանձարանի վրայ դրուած է լինում մի քանի անանգամ այդ չէկերը, առանց ուշադրութիւն դարձնելու, թէ այնտեղ այնքան պատրաստի փող կ'մը, թէ ոչ:

Աւելացնելու է սրա վրայ և վերջերս ընդունուած սովորութիւնը, այն է՝ Իլդիզ-Քեսկը հեռագրով հրամայում է ուղղակի իրան հասցնել այս ինչ գաւառական գումարը առանց նախօրոք Ֆինանսների մինիստրութեանը իմաց տալու կամ փողը նրա մատենից անցկացնելու:

Այդ չէկերը, կամ ինչպէս անուանում են «հավալէ»-ներ այնքան են տարածուած, որ մի քանի գաւառներում ուղղակի չեն ընդունում, որովհետեւ դրանց փոխարէն երբէք ոչ որ փող չի ստացել:

Ներկայումս, ինչպէս սրանից և 15—20 տարի առաջ Ֆինանսների մինիստրը, ամեն երկու տարին մի անգամ «յիշողութեան համար» պատրաստում է «նախահաշիւ», որը իհարկէ երբէք չի հրատարակուած լրագրներում, ինչպէս այդ ընդունուած է քաղաքակիրթ երկրներում: 1901 թ. նախահաշիւը ենթադրում է շուրջ 200 միլիոն լուբլու մուտք, նոյնքան էլ ելք: Բացի այդ ըստ սովորութեան ցոյց էր տրուած և այն, որ առաջիկայ տարուայ մուտքը աւելի է սպասուած, քան թէ ելքը...

Այդ 200 միլիոն լուբլիից 110 միլիոն ռ. կազմում են հողային հարկերը, տասանորդները, տուրք անասուններից:

50 միլիոնի ռ. անուղակի հարկեր (մաքս, աղ, դրոշմաթուղթ). 30 միլիոն ռ. զանազան վարչական հարկեր և մնացեալը տուրքեր վասսալական ձևի տակ:

Գալով ելքին՝ յիշենք այստեղ Թիւրքիայի այն ընդունուած, որ սուլթանի անձնական ծախքերի համար նոյնքան է յատկացրած, որքան և հետեւեալ մինիստրութիւններին միասին առած. 1) Պոստ և հեռագիր, 2) Արտաքին գործերի. 3) Լուսաւորութեան. 4) Առևտրի, հողագործական և լեռնային վարչութեան 5) Արդարադատութեան մինիստրութեան: Սրանք բոլորը, ասում ենք, միասին առած նոյնքան են ծախսում, որ-

քան մննակ իլլիզ-Բիօսկը և նրա հերոսը: Բացի սրանից մօտ 50 միլիոն ծախսում է պատերազմական միջոցառումները, 15 միլիոն ներքին գործ. և ժանդարմները—և 70 միլիոն պարտքերի վճարման համար է ծախսում. այդ 70 միլ. համապատասխան ստացուելիք՝ տուրքերի իրաւունքը տրուած է «Հանրային պարտքերի վարչութեանը» որի մասին կը խօսենք առանձին:

Ֆոնկցիօնարիզմը, այսինքն պետական պաշտօն որոնելու տենջը այնքան զարգացած է Թիւրքիայում, որ իմ ասես Թիւրքիայում չի ուզում աստիճանաւոր դառնալ: Այդ երեւոյթը մանաւանդ զարմանալի է երևում, երբ աչքի առաջ առնենք այն, որ պետական պաշտօնեաները ամբողջ ամիսներ չեն ստանում իրանց ուժիկները: Ամեն մի պաշտօնեայ տարուայ սկզբում ստանում է մի թերթ՝ «սուրէթ», որտեղ նշանակուած է պաշտօնեայի ստանալիք տարեկան ուժիկը: Ռոճիկը ստանալիս՝ ամեն անգամ այդ «սուրէթ»ի վրայ նշանակում է և այն, թէ որքան է մնացել ստանալու: Բայց համարեա միշտ պետական ծառայողները ամիսներով չեն ստանում իրանց ուժիկը, ուստի նրանք ստիպուած են տանել ծախել իրանց «սուրէթները» 4. Պոլսի սարքաֆներին: Այս վերջիններս գնելով սուրէթի ամբողջ արժէքի միայն քառորդ գնով, իրանց կողմից վերածախսում են (ի հարկէ ոչ պաշտօնապէս) զանազան միջոցառումների վարչութեան կառավարիչներին անուանական արժէքի $\frac{1}{3}$ կամ $\frac{1}{2}$ գնով: Իսկ այդ կառավարիչները արդէն ունենալով իրանց կարգադրութեան տակ ծառայողներին պատկանած ուժիկներ, նախ և առաջ վճարում են նաղդ փողով այդ սուրէթները, այլ խօսքով դրանց վրայ իրանք շահում են 40—50 տոկոս: Պարզ է, որ վաղ թէ ուշ կառավարութիւնը տալիս է պաշտօնեաների ուժիկները, բայց ոչ թէ այն մանր ծառայողներին, որոնք ամենից շուտ և ամենից շատ կարիք ունին ուժիկը կանոնաւորապէս ստանալու: Այս բոլորը գաղտնիք չէ. բայց ինքը կառավարութիւնն այնպէս է ձևանում, թէ կան, «այլ կողմնակի միջոցներ»—ծառայողի կեանքը հայթայթելու: Բայց իմ չգիտէ, որ արեւելքում կեանքը այնքան էլ հարուստ չէ այս «կողմնակի» միջոցներով. միակը կայ և նրա անունն է հոչակաւոր «բաքշիշը»: Բաքշիշ վերկից մինչև ցածր. բաքշիշ ամեն տեղ և ամեն դէպքում: Ի՞նչ ասես չի կարելի արեւելքում ձեռք բերել բաքշիշով. «բայլին ոտքերն են կերակրում» ասում է առածը, թուրք պաշտօնեային կերակրում է բաքշիշը, այլապէս նա ստիպուած է կամ քաղցից մեռնել և կամ... կողոպտել: Եւ այն դէպքում, երբ բաքշիշը

չի յաջողում կամ անկարելի է դառնում—գոյութիւն ունի կեղեքումը: Մի խօսքով Թիւրքիայում ժողովուրդը տալիս է կառավարչական պաշտօնեաներին և ուղղակի և անուղղակի: Անուղղակի՝ տալով պետական հարկեր, որոնց մեծ մասը ծախսւում է այդ պաշտօնեաների վրայ. ուղղակի՝ տալով բաքշիշներ և վճարելով ստիպողական միջոցներով, որպէսզի այս կամ այն օրինական խնդիրը անցնի, և կամ արհեստական խոչընդոտների չհանդիպի:

Ֆինանսների մինիստրութեան հսկողութեան տակ է գըտնւում մաքսային տուրքը: Վերջինս գոյութիւն ունի Թիւրքիայում, ոչ թէ արդիւնաբերութեան մի որևէ ճիւղը զարգացնելու նպատակով, այլ լոկ պետական եկամուտը մեծացնելու համար: Արտասահմանեան ապրանքների համար Թիւրքիայում որևէ տարիֆ գոյութիւն չունի. այլ մաքս վերցւում է ապրանքի արժողութիւնից (ad valorem) ութ տոկոս: Ինչ որ ներմուծւում է, թէկուզ հում նիւթ թէ արդիւնագործուած ապրանք, վերցւում է արժէքից 8 տոկոս. իսկ ինչ որ արտահանւում է Թիւրքիայից, վերցւում է Թիւրք կառավարութեան կողմից ապրանքի ընդհանուր արժէքից—մի տոկոս:

Թիւրքիայի ներմուծման ու արտահանման ստատիստիկան հետևեալ թուերն է մեզ տալիս:

1898—99 թ.

Ներմուծ	Եւրոպ.	ապր. արծ.	Արասիան	Թրք. ապր.
Անգլիայից	8,567,740	Թրք. ոսկի.	6,313,160	թ. ոսկի
Աւստրիայից	4,202,990	» . » . .	1,496,760	» »
Ֆրանսիայից	2,100,940	» . » . .	4,606,650	» »
Ռուսաստանից	1,752,300	» . » . .	382,770	» »
Իտալիայից	698,830	» . » . .	469,160	» »
Բուլգարիայից	672,680	» . » . .	369,280	» »
Ռումինիայից	675,540	» . » . .	220,930	» »
Պարսկաստանից	581,720	» . » . .	25,030	» »
Բելգիայից	493,570	» . » . .	229,030	» »
Յունաստանից	293,020	» . » . .	329,300	» »
Գերմանիայից	209,140	» . » . .	269,640	» »
Հոլանդիայից	175,640	» . » . .	374,620	» »
Ամեր. Մ.-Ն.-ից	24,360	» . » . .	289,220	» »

24,070,000 թրք. ոսկի 13,750,000 թրք. ոս.

Այս թուերը ի հարկէ կարող են լինել միայն մօտաւորապէս ճիշտ, որովհետև Թիւրքիայի վերաբերեալ ստատիստիկան առ հասարակ կենտրոնացած չէ և գիտական մեթոդով չէ կատա-

րուած: Օր. Գերմանիայից Թիւրքիա ներմուծուած ապրանքի մասին Handelsarchiv-ը այլ թուեր է տալիս, որից հրեւում է, որ գերմանական ապրանքները վերջին տարիներս շատ անկի են ներմուծուում Թիւրքիա, քան թէ այդ տեսնում ենք պաշտօնական ստատիստիկայից: Գերմանական աղբիւրներից երևում է նոյնպէս, որ վերջին տաս տարուայ մէջ, մանաւանդ 1896 թ. դէպքերից յետոյ՝ Թիւրքիայի արտահանութիւնը քանի գնում ընկնում է. իսկ արտահանում են գլխաւորապէս ցորեն, գարի, չոր խաղող, մետաքս և ծխախոտ:

Թիւրքական ֆինանսների մինիստրութեան հովանաւորութեան տակ է դառնում գործարանական արդիւնաբերութիւնը: Պաշտօնապէս Թիւրքիայում համարւում են մօտ 1500 հատ զանազան գործարաններ, բայց այդ թուից հազիւ 50-ը կարող են այդ անունը կրել, մնացածը փոքրիկ արհեստանոցներ են, ուր գլխաւորապէս պատրաստւում են տնային անհրաժեշտ իրեր. բացի դրանից այդ ապրանքները ծախւում են այն գիւղում, կամ այն քաղաքում, ուր և արտադրւում են: Գոյութիւն ունեցող մանր թէ խոշոր արդիւնաբերութիւնը քանի գնում նուազում ու փոխարինւում է արտասահմանում արդիւնաբերուած և Թիւրքիա ներմուծուած ապրանքներով: Այսպէս՝ Զմիւռնիայի նշանաւոր գորգերը, որ առաջ խիստ շատ էին արտահանւում, ներկայումս ամեն տեղ «ծեծւում են» Թունիսում պատրաստուած գորգերից և այդ արդիւնաբերութիւնը շատ է ընկել վերջին տարիներս:

Մենք դեռ ներքև կը խօսինք այն գլխաւոր պատճառների մասին, որոնք խոչընդոտ են Թիւրքիայում խոշոր արդիւնաբերութեան զարգացման: Յիշում ենք այստեղ միայն ամենախոշոր գործարանները, որոնք են մետաքսի, ապակիի, գարեջրի, արհեստական սառույցի, կաշուի: Այդ գործարաններից մի քանիստ, որպէս շարժիչ ոյժ, գործածւում է գոլորշի, միւսներում—ջրվէժները, գետերը, և ինչպէս միշտ, նախնական միջոցներով: Աւելորդ է ասելն էլ, որ այս «խոշոր արդիւնաբերութիւնը» ոչ թէ մահմեդականների ձեռքումն է, այլ կամ եւրոպացիների և կամ հայ բողոքականների, կաթոլիկների, յոյների և մասամբ հայ լուսաւորչականների: Բայց կան և պետական գործարաններ. այդպէս՝ վառօդի գործարան, մահուտի գործարան (պատերազմական մինիստրութեան պէտքերի համար, որտեղ մօտ 2000 բանուոր է բանում). կօշկի պետական գործարան—500 բանուորով. սա արդէն խոշոր արդիւնաբերութիւն է, բայց դրանց թիւը 4—5-ից դէնը չի անցնում:

Անտառների, ինչպէս և հանքերի շահագործման գործը

նոյնպէս շատ թոյլ է դրուած Թիւրքիայում: Երբեմն հարուստ դարաւոր անտառներով, ներկայումս Թիւրքիայի շատ գաւառներում փայտը սպառուել է և շատ է թանգացել: Գալով հանքերին՝ պէտք է ասել, որ հարուստ ամեն տեսակ հանքերով Թիւրքիան ոչինչ կամ համարեա ոչինչ չի շահագործում իր հանքերից: Ինքը կառավարութիւնը շահագործում է պղնձի հանքեր Արդնում (Դիարբէքիւրի մօտ), ինչպէս և Տաւրոսի լեռներում — արծաթ ու արձիճ: Հանքային կոնցրիսիտները շատ դժուարութեամբ են տրուում եւրոպական ակցիօներական ընկերութիւններին. ամենափոքր քանակութեամբ շահագործում է մանգանէզ, ածուխ, պղինձ, խոօժ. դրանցից ամենանշանաւորն է Հերաքլէի ածխահանքը: Այս բոլորից պետական զանձարանը համեմատաբար շատ քիչ է շահում:

Թուրք կառավարութեան բազմաթիւ հիւանդ կողմերից մէկն էլ այն է, որ միևնոյն փողը Թիւրքիայի զանազան գաւառներում զանազան արժէք է ներկայացնում: Օրինակ՝ Բէյրութում և Բաղդադում միևնոյն փողի գները զանազան են, կամ թէ Դամասկոսում այն չեն տալիս, ինչ տալիս են Տրապիզոնում: Թրքաց ոսկին Կ. Պոլսում արժէ օր. 100 պիաստր, և նոյն ոսկին Ջմիւռնիայում արժէ 127 պիաստր: Իսկ Երուսաղէմում 140: Բացի այդ՝ Թիւրքիայում գործածւում են օտար տէրութիւնների փողերն էլ. օր. Բաղդադում և Բասսորայում գործածւում են գլխաւորապէս պարսկական դրանները, Հեջազում և Նմինում — արքայական փողերը, Մեքքայում գերադասում են արծաթը և ամեն ոք շտապում է ոսկին փոխարինել արծաթ փողով... միւս տեղերը ընդհակառակը: Այդ փողային քաօսական դրութիւնը քանիցս ուղեցել են կանոնաւորել, բայց թէ ֆինանսների մինիստրութիւնը և թէ Բանկ-Օտտոմանը ոչինչ չեն կարողացել անել: Չպէտք է մոռնալ, որ մեծ թէ փոքր քաղաքներում կան ահագին քանակութեամբ «սարաֆներ», որ ապրում են փող մանրացնելով, ու փող փոխելով: Ամեն տեղ, բացի 4—5 քաղաքներից՝ մեծ կարիք է զգացւում կանոնաւոր բանկերի, որոնց պակասը շատ է ազդում առևտրի ու տնտեսական կեանքի վրայ: Բացի մի քանի եւրոպական բանկերից, ինչպէս ասացինք դոյութիւն ունի և պետական «Բանկ-Օտտոմանը»: Բայց վերջինս մեծ դեր է խաղում ոչ թէ երկրի առևտրական-արդիւնաբերական յարաբերութիւններում, այլ պետական ֆինանսական կեանքում:

Այդպէս՝ առևտրական մուրհակների զեղջ, կամ այլ այդ տեսակ յատուկ բանկային գործունէութիւն շատ քիչ է զարգացնում Բանկ-Օտտոմանը. նա զբաղուած է գլխաւորապէս պետա-

կան պարտքերի և արժէթղթերի զեղջման և փոխարինութիւնների հարցերով: Բանկ-Օտտոմանը հիմնուած եւրոպական կապիտալներով և միւսնոյն ժամանակ լինելով պետական հաստատութիւն—մի տեսակ միջնորդ է, թրքաց ֆինանսների միջնորդութեան ու եւրոպական կապիտալիստների մէջ: Ահա թէ ինչու 1895-96 թ. դէպքերը սաստիկ ազդեցին եւրոպացիների վրայ: Պէտք է ասած, որ 1896 թ. Բանկ-Օտտոմանը այնպիսի արկածի հանդիպեց, որ միակն է բանկերի պատմութեան մէջ: Մի խումբ հայ յեղափոխականներ յարձակուեցին Բանկ-Օտտոմանի վրայ, որը գտնուում է Կ, Պոլսի կենտրոնական փողոցներից մէկում, մտան ներս, դռները դռները և զգալով իրանց անառիկ բերդի մէջ, սկսեցին պատուհաններից ուժեր արձակել փողոցում խմբուած ժանդարմների և զինւորների վրայ: Անվախ հայ երիտասարդների նպատակն էր այդպիսով գրաւել Եւրոպայի ուշադրութիւնը թրքահայաստանում տեղի ունեցող կոտորածների վրայ. նրանց հաշիւը—զարնել եւրոպացիների գրպանին ի դէմս նրա Բանկ-Օտտոմանի, և միայն այդպիսով ստիպել նրա ուշադրութիւնը դարձնել հայ տարրի վրայ, ունեցաւ միայն իր զուտ պատմական նշանակութիւնը: Եւ յիշաւ ի դիպլոմատիան ցնցուեց, մինչև իսկ սոսկաց, բայց կարճ ժամանակից յետոյ զանազան կեղծ խոստմունքներով յեղափոխականներին հեռացրեց բանկից: Այդպիսով «բանկային դէպքը» որն է պրակտիկ նշանակութիւն չունեցաւ. բայց անուրանալի էր փաստը, որ Կ.-Պոլսի եւրոպական ներկայացուցիչները ցնցուեցին միայն այն ժամանակ, երբ Եւրոպայի կապիտալը բիսկի էր ենթարկւում:

Թէև թիւրքաց արտաքին փոխառութիւնների և պարտքերի մասին միայն կը խօսենք յատկապէս հետեւալ գլխում, բայց այստեղ պէտք է յիշենք թիւրքիայի այն պարտքերի մասին, որոնք ֆինանսների միջնորդութեան տնօրինութեան տակ են գտնուում և ուր Եւրոպան (Հանրային պարտքերի վարչութիւնը) չէ խառնուում:

Այդ տեսակ պարտքերից ամենապիտաւորն է՝ ուս-թրքական պատերազմից մնացած թուրք պարտքը: Ս. Ստեֆանոի պայմանների հիման վրայ, թիւրքիան պարտաւորուեցաւ վճարել Ռուսաստանին 300 հազար ռուբլի. սակայն դրանից իսկոյն և եթ յետոյ, Բերլինի համաժողովը վճռեց հետեւալը՝ համաձայն լինելով սկզբունքով այդ գումարի հետ. որոշեց, որ այդ պարտքը պէտք է բոլորովին առանձին տեղ բռնէ և չպէտք է խառնուի թիւրքիայի մնացեալ և դրանից առաջ գոյացած միւս պարտքերի հետ: Այդպէս թիւրքիայի պա-

տերազմական պարտքը չէր մտնում «Հանրային պարտքերի վարչութեան» տնօրինութեան տակ, այլ կախուած էր լոկ թուրք կառավարութիւնից, որը իբրեւ իր պարտքի երաշխաւորութիւն, ներկայացնում է Ռուսաստանին Ադանայի, Սիվասի և այլ երկու վիլայէթի տասանորդ հարկերը:

Այդ օրից ի վեր, փոխանակ ամեն տարի իր պարտքի տասերորդ մասը տալով՝ թիւրքիան ոչինչ չէր վճարում Ռուսաստանին. և միայն 1898 թուականից ուս դեսպանը ըսկըսում է պահանջել նախկին տարիների չվճարուած գումարը: Տեսնելով, թէ ինչ եռանդ է գործածում Ռուսաստանը իր պարտքը պահանջելիս՝ թուրք կառավարութիւնը դիմեց Բանկ-Օտտոմանին և վերջինս վճարեց Ռուսաստանին ապառիկ գումարները, առնելով միևնոյն ժամանակ իր կարգադրութեան տակ չորս վիլայէթների հարկերը, որ առաջ ֆինանսների մի-նիստրութեան ձեռքումն էր գտնուում:

Ռուսաց դեսպանի այդ անակնկալ պահանջները իր ժամանակին զանազան տեսակ էր բացատրուում Եւրոպայում, բայց դրանց վրայ կանգ առնելը—մեր յօդուածի սահանից դուրս է:

Ռուրէն Բերքերեան

(Գը շարունակուի)